

բժշկական օգնություն կայ: Մեծ կարևորություն է զգացվում բնակարանները: պաշարելու օգնությամբ է, որովհետև ամբողջ ուտելիքները թաղված է աւերակների տակ: Այստեղ կաղանկերով և տեղական կոմիտեի վնասվածներին օգնություն հասցնելու համար: Հայր մեծ կարիք կայ: Օգնեցէք, որպէս զի հետք լինի ժամանակաւոր բնակարաններ շինել: Անտուն և անապատան մնացողների թիւը հասնում է 1,000 ընտանիքի:

Քաղաքում մեծ հասած տեղեկությունները մի քանի մանրամասնություններ, որոնք վերաբերվում են երկրաշարժից վնասված տեղերին: Դեկտեմբերի 19-ին պատահած երկրաշարժից վնասված 10 գիւղերն էլ գտնվում են լեռների ստորոտներում: Կարելի է երևակայել, թէ ինչ սարսափելի ցրտեր են տրորւմ այժմ այնտեղ և մանաւանդ այս տարին: Այս տարին, ինչպէս ընդհանրապէս Արարաթաւքի գաւառում, այնպէս և այդ 10-ը գիւղերում հացբոյսը, որի մշակումը և կաղնում է ազգաբնակչության ապրուստի միակ միջոցը՝ չատ անբաւարար էր: սրտ վրա եթէ աւելացնենք և այդ 10-ը գիւղերի աղբաւը, խեղճ ու անհար փրճակը՝ այն ժամանակ կարելի է մասամբ գաղափար կաղնի այն սարսափելի դժբախտութեան ու նրանից առաջացած ահազին կարիքի մասին, որ ստեղծեց 19-ի երկրաշարժը: այժմ հացի, շրի, բնակարանի անաւելի պէտք է զգացվում, որի խնկարկան չափը մոտակայում կը պարզվի:

Այդ 10 գիւղերն էլ գտնւ հայաբնակ են: Համաձայն Անդրկովկասեան վիճակագրական տեղեկությունների ժողովածուին (1893 թուի հրատարակութիւն, հիմնված 1886 թուի ընտանեկան մարդահամարի վիճակագրության վրա) չափերով: 10 այս գոտ հայաբնակ գիւղերի բնակիչները թիւն է—

	Ընտանիք	Մարդ
Մաճաթիա	69	584
Օլապետ	68	558
Արագովա	114	921
Մերենիա	92	864
Սաժաթ (մեծ և փոքր)	93	798
Իրիթիա	60	580
Ալաթուրան	37	387
Կաճօ	25	313
Ճանչլա (Բէման)	79	877
Ղաւտօ (Գոտաթաթ)	32	401

Գումար . 669 — 6283

Իսկ ներկայումս, ի նկատ առնելով ազգաբնակչության բնական աճումը 13 տարվայ ընթացքում՝ վնասված ազգաբնակչության հաւանական թիւը կարելի է հաշվել աւելի քան 8000 հոգի:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Ինկտեմբերի 18—20-ին Քիֆլիսի նահանգական դատարանի ժամանակաւոր բաժանմունքը Զաքարիա քաղաքում ընկեց մի գործ, որով մի քանի զինվորներ մեղադրվում էին ոստիկանական պաշտօնեաներին զինաւորված ոյժով դիմադրելու մէջ: Մեղադրական ակտից այդ գործի մանրամասնութիւնները հետևեալն են:

Ներկայ տարվայ մայիսի 15-ին, երեկոյան, Զաքարիայի շրջանի Կարապետեան անտառում, անտառային պահապանները բռնեցին Սաբաթ 10 գիւղի բնակիչներից ընդհանրապէս զինուորական ծառայող, որոնք առանց իրաւունքի կտրուում էին ծառերը փայտ կտրողների, անտառապահներ և զբանց օգնութեան հասած չափարների մէջ հրացանաձգութիւն սկսեց, որի ժամանակ փայտ կտրողներից մէկին՝ Գրիգոր Բալաբկին, չափարները վիրաւորեցին, և նա վնասված վիճակով վերջին թիւերին: Վերոյիշեալ անցքի մասին տեղեկութիւն ստանալով՝ Ղազարի գաւառաւանստի գլխաւոր՝ պորուչիկ Արդատով իր հետ վերցրեց տանուտէրին և տասը ձիաւորներ, որոնց թիւում էին և մայիսի 18-ին փայտ կտրողների հետ հրացանաձգութեան մէջ մասնակցութիւն ունեցած չորս հոգին: Քննելով տեղը՝ Արդատով ճանապարհ ընկաւ դէպի Սաբաթ 10 գիւղը, զինաւորութիւն ցոյց տուողների բնակութեան տեղը: Դեռ մէկ ու կէս վերստ էր մնացել մինչո Սաբաթ 10 գիւղ հասնելը, որ Արդատով ճանդիպեց մի սայլի, որով զաւոյն էին զբնուծ երկու սաբաթիցները—Օհանէս Ապրիկով և Ալիբէկ Կարթով: Սայլի վրա հրացան տեսնելով՝ պորուչիկ Արդատով խնց հրացանը, առնելով միմեկին ժամանակ նրանց վրա եղած խնայելները, և հրամայեց հրացանի տէր Կարթովին հետնել իրան դէպի Սաբաթ 10 գիւղը: Մի փոքր ճանապարհ ևս անցնելով՝ Արդատով ուրիշ երեք սայլերի հանդիպեց, որոնցով զնուծ էին երեք մարդ—Դուռը Արուստամով, Աբրա-

համ Աղաջանով և Բուդաղ Ղուկասով: Առաջին երկու հոգին, նկատելով, որ տանում են Կարթովին, և վախճնալով, որ իրանցից ևս կը խլեն հրացանները՝ հրացանները ձեռքն առած փախան դէպի լեռները: Արդատով սկսեց աղաղակել, որ նրանք կանգ առնեն, բայց որովհետև նրանք չարուսակուծ էին փախել՝ չափարներին հրամայեց հանել նրանց և բռնել: Այդ ժամանակ Դուռը Արուստամով հրացան կրակեց չափարների վրա: Վերջինները սկսեցին աղաղակել: Բնչ էք անում, ախր սա նայիք է՛ք, իսկ Արդատով ձին վազեցնելով՝ վրա պրծաւ հրացան կրակող Արուստամովի վրա: Զր նայելով չափարների դժուշակութեանը՝ Արուստամով երկրորդ անգամ կրակեց հրացանը Արդատովի վրա, բայց էլի ոչ որին չը դիպաւ: Այն ժամանակ Արդատով ձիուց վազը եկաւ, հրամայեց չափարներին կրակել հրացանները և ինքն ևս կրակեց: Այդ հրացանաձգութիւնից վիրաւորվեց Արուստամով Նրան աղետոյ էնթ բռնեցին, նոյնպէս չուաններով կապեցին Աղաջանովին, երկուսին ևս զինաթափ արեցին և տարան Սաբաթ 10 գիւղը: Եւ որովհետև այդ բոլորը տեղի ունեցաւ համարեա զիւղի ծայրում՝ հրացանաձգութեան ձայնը լսեցին այնտեղ: Հրացանաձգութեան ձայնի վրա ժողովուրդն սկսեց վազել վազ հաւաքել: Ամբոխի մէջ լուր տարածվեց, թէ «Նայիր սպանեց Արուստամովին»: Այդտեղ էին վիրաւորված մայրը, երայրը և ազգականները: Ամբոխը սկսեց յուզվել: Փողոցները ձեռքին՝ առաջինը յարձակվեց Արդատովի վրա վիրաւորվածի եղբայր Ասրի Արուստամով: Չափարներին զինաթափ արեցին, ձերբակալվածներին ազատեցին, բացի զորանց չափարներին ձեռքեցին, իսկ Արդատով փորում բռնեցրէ հարուած ստանալով՝ ընկաւ արիւի մէջ: Արդատովին օգնութեան հասաւ տեղական տանուտէր Դահիէ Աւագով, որը իր տակտի շնորհիւ և առաջնորդեցի մի քանի ազգեցիկ մարդկանց օգնութեամբ հանդիսացեց կատաղած սարսիւր և թագրեց իր տանը թէ Արդատովին և թէ չափարներին:

Մեղադրական ակտով յանցանոր էին ձառնալվում 17 հոգի, որոնցից դատարանը մեղաւոր ճանաչելով Դահիէ Արուստամովին և Արաբանով Աղաջանովին՝ դատապարտեց տաժանակիր աշխատանքների 2 տարով և 8 ամսով, ու ինչ հոգու դատապարտեց բերդաբերութեան 3 տարուց և 6 ամսից սկսած մինչև 2 1/2 տարով: Եթե մեղադրվողներին դատարանը արդարացրեց:

«Тифл. Листок»

ՆԱՄԱԿ ԵՈՒՇՈՒՑ

Ինկտեմբերի 9-ին

Ամսիս 4-ին տեղիս քաղաքային կուրի դահլիճում ընդհանուր ժողով էր նշանակված, որ ի միջի այլ խնդիրների՝ քննութեան էր դրված կուրի ընթերցարանի համար առաջիկայ տարին ինչ քանակութեան և ինչ օրինակ պարբերական հրատարակութիւններ բերել տալու խնդիրը: Բնորոշ փաստն այն էր, որ անդամներից ամեն մէկը աշխատում էր իր պրոֆեսիոնարի համապատասխան ամսագիր կամ լրագիր առաջ եղանակ, որից և խրատակելով, պ. Հ. Վեդրով, ծրարները չափ վրդովված, պահանջում էր, որ բերել տրվելը ուսերէն և հայերէն թերթերի թուի համապատասխան բերել տրվեն նաև Հնդկաստանում և Եգիպտոսում հրատարակվող պարբերական և թուրքերէն լեզուով թերթերը, ի նկատի չառնելով այն անհրաժեշտ պայմանը, թէ կուրի անդամների մէջ կը գտնվեն արեւօք այդ թերթերով հետաքրքրվողներ թէ ոչ: Անդամ Բցիլիսիւն Նիկտեց, որ ընթերցարանում ներկայումս ստացվող թուրքերէն լեզուով թերթերը ընկած են մնում առանց ուղարկութեան...

Նոյն այդ ժողովում բժիշկ Մեխմադարով շատ իրաւացի նկատեց, որ կուրի գրադարանը բաւական աղքատ է, անհրաժեշտ գրքերի մեծ կարոտութիւն ունի և որ հարկաւոր է ուղարկութիւն գրքերի մէջ օգնութիւն տալու: Մենք էլ համաձայն լինելով յարգելի բժիշկի հետ, կաւեղանջէինք, որ մեր կուրը ոչինչ կորցրած չէր լինի, եթէ փոխանակ տարեկան 200 ռուբլի յատկացնելու նոր գրքեր բերել տալու համար, որ մի շատ աննշան գումար է, յատկացնէր առնուաժան 500 ռուբլի, առանց որեւէ դժուրութեան կրճատելով երկրորդական ծախսերը: Պէտք է խոստովանել, որ կուրի գրադարանից օգտվող անդամներն էլ աչքի ընկնող կոտորածներ են կաղնում, սակայն գրադարանի աղքատ լինելը արգելք է լինում ընթերցող անդամների պահանջներին բաւարարութիւն տալու:

Թաղեւ և Բարթոլոմէոս առաքելների տունը օրը թեմական դպրոցում հանդէս կատարվեց, որ բաւական հանդիսատեսներ կային: Աշակերտներից մի քանիսը շարագրութիւններ և ոտանաւորներ կարդացին, իսկ դպրոցի աստուածաբան վարժապետը արեւելեան բարձրագոյն տոնի առիթով իրան յատուկ ստիքստութիւններով իր մի ճառ արտասանեց: Հանդիսատեսները շարունակ յորանջում էին... Միակ հետաքրքրական ուսուցիչ Պապովեանի գեղեցիկ կազմած բառաձայն երգեցիկ խումբն էր, որը երգեց մի քանի ընտիր երգեր:

Ամսիս 7-ին նշանակված դուռայի նիստը՝ անդամների օրինական թիւը ներկայ չը լինելու պատճառով՝ յետաձգվեց 21-ին: Այդ նիստի համար որոշված պարագմունքների առարկաների շարքում մտցրած է նաև մի հետաքրքիր առարկայ, այն է նախկին բարձրագոյն-ընթերցարանը քաղաքին նուիրելու և վերջինիս անունով քաղաքումս բանալու ընկերութեան առաջարկը:

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Քարվանսարա, դեկտեմբերի 16-ին
Քրդեան գիւղի կիսաշէն եկեղեցու շինութեան համար ստացաւ Բաղուրից պ. պ. Ե. Աղաճեանից 75 ռուբլի և Գ. Տէր-Սարգսեանից 25 ռուբլի: Յայտնում եմ խորին շնորհակալութիւն նուիրատուներին իմ և Քրդեանի հասարակութեան կողմից:

Մեծուպ քահ. Էդիլեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՈՐ

Արարաթաւքի գաւառի երկրաշարժի աղետից վնասվածների օգտին «Մշակի» խմբագրութիւնը իր կողմից նուիրում է յիսուս ռուբլի: Նոյն նպատակի համար ստացանք — Յարութիւն Մեղիւ-Աղաճեանից 400 ռուբլի: Գաւառի աշխատաւորներից 3 ռուբլի 70 կոպ., Ե. Մեղիւ-Բախտամանցից 3 ռուբլի: Սո. Մալխասեանից 5 ռուբլի: Գ. Շահումեանի միջոցով 12 ռ. 50 կ., որ նուիրել են հետեւեալ անձինք—Մ. Քոչարեանց 2 ռ., Գ. Մուրեմանց 3 ռ., Գ. Շահումեանց 3 ռ., Պ. Թամաշեանց 3 ռ., Ա. Գոնիւսեանց 1 ռ. և Գեղուիկեանց 50 կ. —Վաղ. Բաւանջեանից 5 ռ. 0. Զ. Բ. 3 ռ.: Ընդամենը երկրաշարժից վնասվածների համար ունենք 82 ռուբլի 20 կոպէկ:

Թիֆլիսի առևտրական բանկի խորհուրդը իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ երեքշաբթի, դեկտեմբերի 21-ին՝ որոշեց յատկացնել Արարաթաւքի գաւառի երկրաշարժից վնասվածների օգտին երեք հազար ռուբլի, յանձնելով այդ գումարը Թիֆլիսի նահանգապետին:

Մեր ընթերցողներին յայտնի է, որ Մուշի առաջնորդական տեղապար լրագիրների մէջ յայտարարել էր մշեցի պանդուխտներին, որ եթէ նրանք իրանց ամուսիններին փող և նամակ չուղարկեն կամ չը վերադառնան հայրենիք, իրանց բնանիւրը պահելու համար՝ հոգեւոր կառավարութիւնը իր ձեռքում եղած միջոցները պիտի դործարդէ՝ մշեցի կանանց գանգատներին բաւարարութիւն տալու համար: Այժմ Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են, որ Վեհափառ Վաթիկանը Օրմանեան պատրիարքին գրած մի կոնդակով իրաւաւոր է ամուսնաւարտ իրաւունք տալ մշեցի այն կանանց, որոնց ամուսինները երկար ժամանակ քաղաքին են հայրենիքից և նամակ կամ փող չեն ուղարկում իրանց ընտանիքներին:

Վրաց պատկերազարդ շաբաթաթերթ «Կվալին» հաղորդում է, որ ներկայ դեկտեմբեր ամսի 26-ին լրանում է հայուհի տիկին Անաստասիա Թումանեան-Մէրէթլիի խմբագրութեամբ լոյս տեսնող մանկական ամսագիր «Զէջլի» ղդրութեան տասնամեակը: Վրաց գրագիտութիւն տարածող ընկերութեան ընթերցարանում այդ օրը կը կարդացվի միշտ ամսագրի գրականական հաշիւը: Վրաց հասարակութիւնը ներկայ գտնվելով այդ ընթերցանութեան ժամանակ՝ կը ծանօթանայ իրա մանուկներին կրթող լրագրի տուած օգուտներին հետ:

Երեքշաբթի, դեկտեմբերի 21-ին, Կովկասեան Գիւղատեսնական ընկերութեան մէջ կայացաւ չեքած ապահանքի խորհրդակցութիւնը չեքածի վրա հսկողութիւն նշանակելու խնդիրը ընկելու նպատակով: Ժողովականները մեծամասնութիւնը գտաւ հսկողութիւն նշանակելու կարեւոր, սակայն հետազոտութեան այն եղանակը, որ ընդունված է Թիֆլիսի չեքածաբուժա-

կան կայարանում՝ համարեց անկատար, որովհետև այդ հետազոտութիւնը միայն պարզում է «պերրի» հիւանդութեան լինել չը լինելը, իսկ միւս վտանգաւոր հիւանդութիւնները մնում են անյայտ: Ժողովականները յայտնեցին այն միտքը, որ հսկողութեան կազմակերպութիւնը պէտք է կատարվի այնպիսի եղանակով, որպէսզի չեքածաբուծները կատարեալ հաւատ ընծայեն հետազոտութեան: Այդ պատճառով հսկող մարմինը պէտք է լինի կատարելապէս անկախ հետազոտող մարմնից: Խորհրդակցութեան միջոցին պարզվեց, որ մի քանի վաճառականների ազահիւծութիւնը պատճառ է լինում վատ սերմի տարածման Վաճառականը, էմանութեան հաւար, ցնում է վատ սերմ և տարածում ժողովրդի մէջ: Դիշտ է, այն ֆիրման, որ մի տարի վատ սերմ է տալիս՝ անուհետ կորցնում է իր վարկը և նրա սերմը այլ ևս չէ ծախվում: Բայց եղած վնասը երեւիմ ալիքան մեծ է լինում, ոչ ժողովրդը կորցնում է իր հաւատը դէպի չեքածապանութիւնը և թողնում է նրան կամ կործանում է իր արդիւնագործութիւնը: Ժողովականները որոշեցին մի շաբաթից յետոյ, եկող երեքշաբթի օր, դեկտեմբերի 28-ին, նորից ժողովել Գիւղատեսնական ընկերութեան դահլիճում և քննել չեքածապահութեան հսկողութեան վերաբերեալ մնացած հարցերը:

Արարաթաւքի լրագիրները հաղորդում են, որ երկրաշարժութեան միմիատրութեան հողային բարեօրոշմների կառավարիչ գեներալ-լեյտենանտ Ի. Փիլիսիսի ճանապարհ ընկաւ Բախտամի տեղի ու տեղը պարզելու քաղաքի շուրջը գտնվող ճահիճները ցամաքացնելու հարցը, իսկ այնտեղից կերթալ ընկելու այն հողերը, որոնք գտնվում են Արաքս գետի երկարութեամբ, որոնց վրա մտադրութիւն կայ իրիկ-գաղիա (ուսուրման) շինել, որպէսզի յետոյ կարելի լինի այդ հողերը մաս-մաս անել և տալ կենտրոնական նահանգներից եկող գաղթականներին:

Մի պարոն, որ ցանկանում է իր անունը անայտ պահել, ուղարկել է մեզ 5 ռուբլի՝ այրի Վարդուհի Սուրդուեանցի օգտին: Մենք այդ հինգ ռուբլին յանձնեցինք Սուրդուեանցին:

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎԻՑ մեզ գրում են. «Կիրակի, դեկտեմբերի 19-ին, հերեկվայ ժամը 2-ին, զգացվեցին երկրաշարժի զօրեղ ճնշումներ, որ տեղի ունեցան մի քանի փաղաքի ամբողջ աղաքականութիւնը սարսափած դուրս վազեց փողոցը: Վնասներ չը կան:

ԲՈՐԺՈՒՄԻՑ մեզ հաղորդում են, որ երկրաշարժի ճնշումներն այնտեղ ևս բաւական զօրեղ են եղել: Վնասված են, բացի մասնաւոր տներից և ամառանոցներից, նաև երկաթուղու կայարանի շինութիւնը, եկեղեցին և զօրանոցը:

ՔԱՐՎԱՆՍԱՐՍԻՑ մեզ գրում են. «Ամսիս 19-ին երեք անգամ երկրաշարժի հարուածներ եղան. առաջին անգամ ժամը երկուսին, որ տեղեց 3 ժող. երկրորդ անգամ ժամը 5-ին էր և տեղեց 1 ժող. իսկ երրորդ անգամ՝ երեկոյան ժամը 9-ին, տեղեց հազիւ մի ժող. Ոչ մի վնաս չեղաւ, թէ և ստատիկ վնասներ: Երեք չէինք տեսած մեղանում մի օրում երեք անգամ երկրաշարժ:

Շիրակի գաւառի ՂԱԶԱՅԱՍ գիւղից մեզ գրում են. «Շիրակում ապօրինի կենակցութիւնը մի տեսակ մօղա է դարձել և շատ տարածվել է ազգաբնակչության մէջ: Մի մարդ թողնում է իր օրինաւոր կիներ և սկսում է կենակցել մի այլ կնոջ հետ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա Ն Գ Լ Ի Ա

Թէ արտասահմանեան և թէ ուսաց լրագիրները Լոնդոնի թղթակիցների միաձայն վկայութեամբ արդէն հաստատված է, որ անգլո-արաւական պատերազմի սկզբում ոչ միայն անգլիական հասարակութիւնը, այլ նոյն-իսկ «War Office»-ը—զինուորական միմիատրութիւնը, ճիշտ տեղեկութիւն չունէր բռնեցի պատերազմական ոյժի որակութեան և քանակութեան մասին: Ամենքն սկզբում հաւատացած էին, թէ դա ոչ թէ լուրջ և դժուար մղելի պատերազմ է լինելու, այլ մի «պատերազմական զրօսանք», որ ամենաշատը կը տեւ մինչև 1900 թուականի տարեկիզբը, երբ բրիտանական զորաւոր կը ծածկան խորտաւոր Պրետորիայում և Բուլմֆօնտէնում և անգլիական աղբը կա-

ընդ կը լինի, որպէս Նոր-տարու ընծայ, մա-
տուցանել իրան մի այնպիսի շքեղ պարզեւ, որ-
պիսին են Հարաւային Աֆրիկայի դաշնակից
հանրապետութիւնները: Սակայն այս անդամ
բախտը չը ժպտաց ուժեղին, և հպարտ բրիտա-
նացին ստիպված եղաւ տեղի տալ մի բուռն
ազարատէրերի առաջ:

Անգլիական զօրքի անդհառ պարտութիւն-
ները բռնեցին սկզբում զարմանք, ապա նաև
յուզումն և դայրոյթ առաջացրին անգլիական
ժողովրդի մէջ և ցանկութիւն ծնեցրին՝ անշուշտ,
ինչ գիտի էլ որ լինի, յաղթել ինչպէս: Ան-
գլիական զօրքի համար այժմ պարզ է, որ եթէ Հա-
րաւային Աֆրիկայում գործերը շարունակվեն
այնպէս, ինչպէս մինչև այժմ՝ այդ հանգաման-
քը ոչ միայն ահագին հարուած կը հասցնէ ան-
գլիական զօրքի համալսարանական համարմանը, այլ
նաև կը գրկէ նրանց բոլոր հարաւաֆրիկական
զաղթականութիւնները:

Ան ինչ էլ գրում «Indépendance Belge»
լրագրի Լոնդոնի թղթակիցը գեկտեմբերի 12-ից
ախ յուզման մասին, որ տիրում է այժմ Ան-
գլիայում:

«Երբեք դեռ ևս Անգլիայում հասարակական
կարծիքն այնպիսի միասնորոշ ցանկութեամբ չէր
պահանջել ամենաանուղիղ միջոցների դիմել
պատերազմը շարունակելու համար, որպէս այ-
ժմ, և այն էլ մինչև այն ժամանակ, երբ բրի-
տանական զօրքի պարտութիւնները վերջը յուժ-
կած կը լինին: Մինչև անգամ միտոքը Լաբուշէր,
որ կատարել կուր էր մղում պատերազմը դէմ
«Truth» լրագրի վերջին համարում յայտնում է,
թէ «պետութիւնն անդադրէ կը կործանվի, եթէ
խաղաղութեան դաշն կապէ պարտութիւններից
յետոյ, երբ բրիտանական Տոդը մի մասը դեռ
ևս ինչամուծ ձեռքումն է, և ապա անկայանում
է, անհրաժեշտ է, ինչպէս էլ որ լինի, վանել
բռնեցրին մեր երկրի սահմանները»:

Իսկ Վիեննայի «Politische Correspondenz» լր-
ագրի թղթակիցը հետեւան է գրում անգլիա-
կան ժողովրդի այժմեան տրամադրութեան վե-
րաբերմամբ:

«Անգլիական կառավարութեան որոշումը—պա-
տերազմի հրաւիրել կամաւորների և իրենցինե-
րի բազմաթիւ կազմը—մեծ համակրութիւն գտաւ
երկրի մէջ: Այն ոգեւորութիւնը, որ ցոյց են
տալիս պատերազմի հրաւիրվածները, ամենայն
ակնհայտութիւնից վեր է և այնպիսի տեսարան է
նեկագրեցում, որպիսին չէ տեսել այժմեան սե-
րունդը: Լոնդոնը գիտում է առջեկից, իսկ գաւառ-
ները հետում են նրան: Կամաւորների ժողո-
վածները դարձել են այնպիսի կէտեր, որ
հանգին բազմութեամբ խռնվում են նորակոչ
թիւնը: Զօրքի շարքը ժողովուրդի ցանկու-
թիւն են յայտնում մինչև անգամ նրանք, որոնք
արդէն վերջացրել են իրանց ծառայութեան ժա-
մանակամիջոցը: Կամաւորների թիւ մասին դեռ
ևս ճիշտ տեղեկութիւններ չը կան: Բայց տե-
ղեակ անձինք հաւատացնում են, թէ միայն
Լոնդոնի զինուորականական բերօններում այն-
չափ կամաւորներ են գրվում, որչափ վիրաւոր-
ված, սպանված և գերի տարվածներ է ունեցել
անգլիական զօրքը Հարաւային Աֆրիկայում:

Շատ ուշ և ծանր դոնդից յետոյ միայն հա-
կացաւ Անգլիան այն պարզ ճշմարտութիւնը,
թէ արդարութեան դէմ կուեն այնքան էլ
հեշտ չէ և լափշտակելու ու կողպտելու ճիշդ-
տումները կարող են մի օր էլ իրանց խիստ
դառն պտուղներն ունենալ:

ՆԱՄԱԿ ՊԱՐՈՒՄԱՆԻՑ

Սալմաստ, գեկտեմբերի 9-ին
Ով գործախուժութիւն է ունեցել Պարսկաստա-
նում ճանապարհորդելու՝ արդէն գիտէ, թէ որ-
քան անտանելի են և դժուարին տանջանքնե-
րով լի այդ՝ խաւարի մէջ խաղաղութիւնը պետու-
թեան հաղորդակցութեան ճանապարհները, ո-
րոնք գտնվում են կատարեալ նահապետական
գրութեան մէջ: Պարսիկը աւելի շուտով հարկը
անգամ ոտը ջարդին կը դիպցնէ, քան թէ մի
անգամ կը թեքվի՝ ճանապարհին ընկած ջարդ
վերցնելու և դէն գցելու, որպէս զի հանգիստ
ընթացք: Պարսկական երկաթուղին էլ—չար-
վադարի ձին և էջը, որոնցով կատարվում է ան-
տանելի ճանապարհորդութիւնը, նոյնքան ծոյլ և
դանդաղաբայ են, որքան ինքը պարսիկը իր
ընտանեկան և պետական գործերում: Աւելա-
ցրել և այն, որ իւրաքանչիւր քայլափոխում
ճիշդ սանձը բռնում են և ստիպմամբ «թոր-
վաղ ըստի», «սալմաստի», «սալմաստ...» էլ չը
գիտեն ինչ զահրուժար պահանջում, այն ժա-
մանակ կը տեսնաք այդ ողորմելի երկրի ճա-
նապարհորդութեան կատարեալ զգուշի պատ-
կերը:

Նշեմքերի 3-ին Ջուլիայից դուրս եկալ և
նոյն ամսի 12-ին հասալ Սալմաստ: (Ռուսաս-
տանում պոստայի հանրակառուով 3 օրվայ ճա-
նապարհ):—Ուրմիի լճի հիւսիս-արևմտեան ա-
փին կից տարածվում է Սալմաստի հարթ և գե-
ղեցիկ դաշտը: Երեք կողմից չըջանաձև պատած
լեռներով՝ արևելքից սահմանակից է Ուրմիի
գաւառին, հիւսիսից՝ Խ յի գաւառին, հարաւից
և արևմուտքից՝ Սոմալի քրդաբնակ և թիւրքա-
կան Աղբալ գաւառներին: Սալմաստի գեղեցի-
կադիր դաշտի վրա միմեանց կից փռված են
աւելի քան 50—60 գեղեր, կենտրոնում Դիլի-
ման քաղաքով: Գաւառի բնակիչները կազմում
են—պարսիկներ, հայեր, ասորիներ, քրդեր և
հրէաներ:

Ջուտ հայաբնակ գեղերն են—Ղալասար,
Փայալուկ, Սառնա, Հաֆիվան և Մահլամ:
Այլ աղբերի հետ հայերը խառը բնակվում են
հետեւեալ գեղերում—Հին-քաղաք, Սալմա, Խո-
րովա, Սահմաներիկ, Ուլալ, Վարդան, Գալա-
շան, Դրիշկ, Ելլիվան, Ախտանա, Ղալալ,
Քեօշաբիշ և Զէլաշուկ: Հայերը Սալմաստում
կազմում են 12—15 հազար բնակիչ, որոնց մի
երրորդ մասից աւելին գտնվում է տարածութեան
մէջ: Հայոց ծնական զարդերը կան հետեւեալ
գեղերում—Ղալասար (երկուսեան, երկուսե),
Փայալուկ, Սառնա, Մահլամ, Հաֆիվան, Սալ-
մա և Հին-քաղաք (արական, միդանեան): Այլ
զարդերի մէջ սովորում են մոտ 400 մանուկ-
ներ: Միայն կայ բանալու և մի կենտրոնական
վարժարան, որի համար արդէն 11,000 ր. կան-
խիկ դրամադրու կայ: Այդ գումարից 10,000
ր. նուրբել է Ռուստում (Ի. Վ.) բնակված
Սալմայի պ. Դ. Օնանով, իսկ մի հազար բոլ-
բին նուրբել են երկու յարգելի տիկիներ: Ա-
սում են, որ կենտրոնական վարժարանի հար-
ցը արդէն ձեռք է առել Ատրպատականի ա-
ռաջնորդ Ալիստեանը և աշխատում է ամենա-
մօտ ապագայում իրագործել:

Ղալասարում կայ և Հայոհնայ Բաբեգոր-
ժական ընկերութիւն 19 անդամութիւնով: Ո-
րոնցից 5-ը բաղադրանքով—Որբան և Կարոզայ
տեղեկութիւն ստանալ յարգելի տ. նախագա-
հուհուց՝ այդ ընկերութեան հիմնական դրա-
մագրութիւն է 300 թուման (600 ր.): Կողմնակի
եկամուտի աղբիւրներն են—հիմնական դրա-
մագրի թուկոսը 10%, անդամների տա-
րեկան անդամագրութիւն—12-ական դան (2 րուբ.
40 կոպէկ) և վիճակագրից ստացված մուտքը:
Ընկերութեան գործունէութիւնը կենտրոնանում
է միմիայն զարդի վարժուհու ուժերը վճա-
րելով (150 րուբլի):

Մի քանի գիւղերում, զարդին կից կան և
ընկերաբան-գրագրարաններ, որոնց մէջ աչքի
ընկնողներն են Հաֆիվանի «Ընկերայնութեան»
և Ղալասարի «Արժուքներ» գրագրարանները: Այլ
գրագրարանների մէջ գրքերի թիւը մի պատկա-
ռելի գումար է կազմում. ունեն տված կանո-
նակի և գրագրարանի վարչութիւնները եռամ-
սով տարածում են հասարակութեան մէջ ըն-
թերցանութեան սէքը: Մահլամում ևս գտալ ար-
դէն 4—5 տարի առաջ հիմնված մի ընկերու-
թիւն «Ընթերցանութեան» անունով. անդամների
թիւը հասնում է 20—25-ի, սակայն գործերին
երեսի վրա ընկած է, նախաձեռնող ու գործին
տեղեկ անձն չը լինելու պատճառով: Հաղի
կարողացել են 40—50 կտոր մանկական գրքեր
ձեռք բերել. կարողում են ամենայն սիրով և
բովանդակութիւնը միմեանց պատմում: Հէնց որ
մտայ գիւղը՝ մի քանի երիտասարդներ դիմեցին
ինձ և ինքնուրուշ ընթերցանութեան գրքեր:
Մօտս ունէի 5—6 հատ մանր գրքեր, ես նուի-
րեցի նրանց գրագրարանին. որքան ուրախացան,
միմեանց ձեռքից էին խլում: Պարզ նկատվում
էր, որ գիւղացիների մէջ արդէն արժեքով է
ընթերցանութեան սէքը և ինքնուրուշ ընթերցա-
նալիցութիւնը գաղափարը. բայց որովհետեւ այն-
քան նիւթական միջոց չուեն իրանց ցանկա-
ցած գրքերը ձեռք բերելու՝ լսողքիցին ինձ դի-
մելու յարգելի հեղինակներին և թարգմանչի-
րին, որ իրանց հեղինակութիւններից բարեհաճեն
մի-մի օրինակ նուրբելու իրանց գրագրարանին:
Մահլամի ընթերցանութիւնը ստանում է «Մշակ»,
սակայն առաջիկայ 1900 թ.ականի համար հա-
գիւ թէ կարողանայ բաժանորդագիր ուղարկել:
որովհետեւ անդամագրութեանց գոյացած 10—15
թումանից մի մասը ծախսել են գրագրարանի
պահարանի վրա, իսկ մնացած գումարով
կամեցան, ես գրագրարան-ընթերցարանի կանո-
նադրութիւնը, որը արդէն հաստատել է Ատր-
պատականի ընդհանուր առաջնորդը՝ յանձնել
ուղարկութեան:

Ընդհանրապէս հայերը Սալմաստում այժմ
խղճալի գրութեան մէջ են, չնորհիւ ժողովրդի
կենտրոն և ստացուածը անհանդիմ օրէնքի բա-

ցակալութեան և պարսից պաշտօնեաների կեղե-
քումները: Օր չէ անցնում, որ տուգանք և բան-
տարկութիւն տեղի չունենայ, ուշադրութեան
անարժան պատճառներով:

Անդէաս Մեկը-Բաբախանեան,

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«New York Herald» լրագրի Պարիզի թղթ-
ակիցը հաղորդում է, թէ մի քանի նշաններից
երևում է, որ Պարիզում արդէն տեղի են ու-
նեցել բանակցութիւններ՝ մէկ կամ մի քանի
պետութիւնների միջամտութեան մասին, անգլո-
տրանսկալիսեան պատերազմին դերը տալու հա-
մար: Փրանսիական արտաքին գործերի մինիստր
Դէկլանտ անորոշ պատասխան է տուել: Ըստ ե-
րոյթին՝ տրանսկալիսեան կառավարութիւնը
սրտով ցանկանում է իրադարձիւն և դրա
համար պատրաստ է մինչև անգամ հրաժարվել
Անգլիայից պատերազմական տուգանքները պա-
հանջելուց: Այդ միտքն է գոնէ յայտնել նրա
ներկայացուցիչ Լէյդոն:

Անգլիացիները մեծ յոյսեր են դնում գնե-
րալ Կիտլենդի վրա: Նա դեռ ջանք է, գոր-
ծունեայ, յայտնի է իբրև հմուտ և փորձառու
զինուոր և մինչդեռ ժամանակ քալ: Լոնդոնի
բոլոր յրջաններում լուրեր են պտտում, որ իս-
կական զինուոր հրամանատարը Հարաւային
Աֆրիկայում կը լինի լորդ Կիտլենդը, իսկ լորդ
Բոլթրոս նշանակված է միայն այն պատճառով,
որ Հարաւային Աֆրիկայում գտնվող գնեթալ-
ները չը վիրաւորվեն, որ իրանցից ոտը ստի-
ճան ունեցող գնեթալի իշխանութեան տակ են
ծառայում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԻՌԻՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

21 գեկտեմբերի

ԼՈՆԴՈՆ: «Standard» լրագրին հաղորդում են
Ֆրէրի մօտ գտնվող բանակից, գեկտեմբերի
20-ից, որ այն դժուարութիւնները, որոնք ներ-
կայանում էին Բուլլէրին՝ աւելի ևս բարդացան,
վերջին կուր գործողութիւնների ակամայ յետա-
ձգելու օրից: Այժմ Բուլլէրի առաջ գտնվում են
մի շարք պարիսպներով շրջապատած ամրացա-
ւորներ, որոնք տարածված են Տուգելիստալով
16 մղոն: Բուլլէրի վրա խիտ ցրված են բռնե-
րը, որոնք գտնվում են շատ ուժեղ դիրքերում, որ
ամեն տեղ ցրված են թնդանոթներ: Գետը այժմ
ոստովի վարարել է: Այդպիսի պարագայում
սպասվող կուրը կը լինի ամենայնամօր քրդեր
կուրներից և հաւանական է, որ ունենայ ամե-
նամեծ հետեւանքներ: Անգլիական նաւային թիւ-
դանոթները շարունակ աւազակում են թիւա-
մուռ, իսկ անգլիական գիշերապահ զօրքը շա-
րունակ անհանդուրձանում է նրանց թիւերը:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Քէյտէրի գործն: Քէյտէր բա-
նակցութիւնները եւրօպական մեծ պետութիւն-
ների և Նապօնայի հետ, ամբողջ Չինաստա-
նում «բաց դռան» քաղաքականութիւնը պահ-
պանելու հարցի վերաբերմամբ, մասնակցողների
միջամտութեան կողմից բարենպաստ հետե-
ւանքների հասնել: Կառավարութիւնը ներկայ-
ումն չէ հրատարակում ստացած պատասխան-
ները, այնու ամենայնիւ, ամենաճիշտ լուրերին
նայելով՝ Գերմանիան, Ռուսաստանը, Փրանս-
իան, Նապօնիան և Անգլիան համաձայնութիւն
են կայացրել: Չեն կասկածում, որ Իտալիան էլ
նոյնպէս կը վարվի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Օրէնսդրութիւնների ժողովա-
ծուի մէջ հրատարակված է, որ 1900 թ.ուա-
կանի ընթացքում ստիպողական միջոցներ չը
պիտի գործադրվեն հաւաքելու համար արքե-
նական հողային հարկը, նախկին կայսրաձառնի-
րական հողերն յետ ցնելու վճարները և համա-
նական տուրքերը, որոնք զրկւած են գիւղական
հասարակութիւնների հողաբաժնիների վրա այն
տեղերում, որոնց վրա տարածվում է 1899 թ.
դեկտի 23-ին Բաբարազդին հաստատված կա-
նոնադրութեան ներգործութիւնը հարկերի հա-
ւաքման կարգի վերաբերութեամբ:
ԽԱՐԿՈՎ: Խարկովի համալսարանի պրոֆե-
սորները ժողովել են իրանց մէջ երկու հազար
բութիլ՝ մրցանակ հիմնելու ապա հասարական
նախկին թէկնտը, այժմ Ապալանի ուսումնական
չըջանի հազարաքան: Այլ կէտեկոս անունով: Մը-
յանակը կը տրվի ուսանողներին շարադրու-
թիւնների համար:

ԼՈՆԴՈՆ: «Times» լրագրին հեռագրում են
Կապիտալից, գեկտեմբերի 19-ից, որ այսու-
րաբար մեծ ոյժով յաճախւում գործեցին
Գորտլիստի վրա, բայց յետ մղվեցին կորուս-
տներով: Սպանված են 8 մարդ և 13 ձի: Անգ-
լիացիների կողմից վիրաւորված են չորս մարդ:
«Daily Mail» լրագրի Բէնտլիթեան լուրը Կո-
լսբերդի մօտ: Թնդանոթաձիգ զօրքը երկ

լուսաբացին սկսեց կուր: Բռնեցր պատաս-
խանեցին սաստիկ թնդանոթաձիգութեամբ: Եր-
կու ժամ թնդանոթաձիգութիւնից յետոյ՝ բռնե-
րի թէ ծանր և թէ Գոշկիսի թնդանոթները
ստիպվեցին լուր: Առաջինները թողին բռնեցրը,
որոնց և վերջինն անդադրել, միւսները ազատե-
ցին: Ապա բռնեցր յետ քաղվեցին դէպի հիւ-
սիս: Անգլիացիները խեղին թնդանոց չորս
սալ ուստեղեկների պաշարներով: Անգլիացի-
ների կորուստը շատ աննշան է: Նրանք այժմ
գրաւած ունեն Կոլսբերդ:

ՖՐԵՐ: Քէյտէրի գործն: Բռնեցրը, ըստ ե-
րոյթին, աւազակում են Լէդամիթ Եղիմբու-
լանից:

ԼՈՆԴՈՆ: Քէյտէրի գործն: Բոլոր պատրաս-
տութիւնները տեսնված են՝ եօթներորդ դիվի-
զիան ուղարկելու: համար մինչև յունվարի 30-ը:
Ապրանքատար նաւերը դուրս կը գան ծով:
հինգշաբթի:

ԳՈՐԾԱԿԱԼ: Քէյտէրի գործն: Օտարերկրեայ
զինուորական կցորդները, որոնք անց կացրին
Միդլանտ տունը աւտոնը, այսօր վերադարձան:
ԲՈՒԼԻՆ: Օտարերկրեայ զինուորական կցորդ-
ները ներկայ էին երեկ կայսրի մօտ նախա-
ճաշիկին:

ԿԱԼԿՈՒՏՏԱ: Քէյտէր, գործն: Հնդկաստանի
բոլոր տեղացի կառավարիչները առաջարկեցին
Անգլիային ձիւր Հարաւային Աֆրիկա ուղարկե-
լու համար: Մարաութի մասնաբաժան առաջար-
կեց լորդ Բոլթրոսին մի լուս արաբական ձի:

22 գեկտեմբերի

ԼՈՆԴՈՆ: Լրագրիները բնեկով գերմանական
կայսրի երէկվայ ճառը՝ պնդում են թէ անհրա-
ժեշտ է ինչպէս Անգլիայի, նոյնպէս և Պրուսիայի
համար՝ ուշադրութիւն դարձնել այդ խրատա-
կան դասի վրա և վերակազմել իրանց զինուո-
րական կազմակերպութիւնը: Զինուորական մի-
նիստրութիւնը ստացել է Կապիտալից, յուն-
վարի 1-ից, գեկտեմբերի 1-ից Կոլսբերդի մօտ տեղի
ունեցած կուրի մասին: Ֆրէնց գեկտեմբերում է.
«Թողնելով Բէնդուրգում շոտլանդական զնդի
կէսը, ձիւսը թնդանոթաձիգների մի վաշտով,
թնդանոթ ճակատից յետ կասեցնելու: Նպատա-
կով՝ գեկտեմբերի 31-ին, 5 ժամին ճաշից յետոյ,
ես հետեակ զօրքի միւս կէս գնդով, 5 վաշտ
հեծեալազօրքով, հեծեալ-հետեակ 80 մարդով և
10 թնդանոթով դուրս եկալ Բէնդուրգը և
չորս ժամ գետուց յետոյ կանոց առաջ Մայքէրս
ազարակի մօտ ևս յունվարի 1-ին գրաւեցի այն
բլուրը, որ տիրում է Կոլսբերդի վրա արեւ-
մտեան կողմից: Թշնամու պահանջները յառ-
կարծակի եկան: Լուսադէմին սկսեցի ուժա-
կոծել թնդանոթ դիրքերը: Թշնամին լաւ պա-
տասխանում էր մեր կրակին: Ստիպվելով նրան
լաւ՝ ես հեծեալազօրքով ու թնդանոթներով դի-
մեցի Կոլսբերդի հիւսիսային կողմը, երկաթու-
ղու գծի հանգույցի ուղղութեամբ. որտեղ բռնե-
րի բազմամարդ գունդը գրաւած ունէր բլու-
րը և դիրքը: Կոլսբերդից դէպի հարաւ-արեւ-
մուտք, և մինչև այս հանգույցը այնպիսի իրքը
գրաւեցինք մենք, որ կտրում էինք թնդանոթ
նահանջման ճանապարհը կամուրջով: Մօտ հա-
զար բռնեցր, երկու թնդանոթով, յետ քալ-
վեցին դէպի Նաուպոլիս: Մենք կորցրինք
3 մարդ սպանված և մի քանիսը վիրաւորված:

Ուայտի պաշտօնական հեռագիրը Լէդամիթ-
թիւց, գեկտեմբերի 31-ից, գեկտեմբերում է, թէ
փորձարկութեան և տեղի հիւսնդութիւնները
աւելանում են:

Զինուորական մինիստրութեան ստացած տե-
ղեկութեան համաձայն՝ երէկ գնդապետ Պէյէթը
ցրուեց բռնեցրի գունդը Լուսիստիլի տակ,
Բէլմոնտի մօտ, և գրաւեց նրանց բանակը:
Բռնեցրից գերի ընկան 40 մարդ, չը խօսելով
սպանվածների և վիրաւորվածների մասին:

Անգլիացիների կողմից վիրաւորված է մի սպայ
և երկու զինուոր:

ՀԱՄ ՈՒՐԳ: Հաղորդում են, թէ անգլիացի-
ները Դէլագոս ծոցում բռնեցին «Հանս Վադ-
նէր» յոգենաւը, որ պատկանում էր այստեղի
մի ֆրանսիայի Ֆրանս գաղաւ Ներկայացրեց
գերմանական արտաքին գործերի մինիստրու-
թեան:

ՊԱՐԻԶ: «Հաւասի» գործն: Հաղորդում են, որ
Ֆրանսիական հետեակների խուժըր Կուանդէ-
վանից դուրս գալով՝ գեկտեմբերի 15-ին գնաց
լինացիների Վուզլինի քաղաքի վրա, որ ագիտա-
գիայի կենդրոնն է և բնակավայրը քիմ քաղաքից
որոնք գրգռեցին սպանել Կուեն և Գուրանէր
նաւատիկներին: Գեկտեմբերի 16-ին տեղի ու-
նեցաւ մի կարկուղ կուր, վարժած 1500 չինացի
միլիտիոններ հետ, որ վերացաւ Ֆրանսիացի
համար նպատաւոր կերպով: Զինացիներից
սպանվեցին աւելի քան 200 մարդ: Ֆրանսիացի
կոչերին—սպանված և վ

Типография Грузинск. Т.-ва Большая Ванская ул. № 27.